

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 17-ի N 903 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ՍԱՆԻՏԱՐԱՎՈՒՄԻ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Ստուգաթերթ N 1.21
Դեղատներին և դեղատնային կրպակներին ներկայացվող սանիտարական կանոնների վերահսկողության
(ՏԳՏԴ ծածկագիր՝ 47.73)
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ 20__թվական _____ ավարտը՝ 20__թվական _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը **Հ Վ Հ Հ**

--	--	--	--	--	--	--	--	--	--

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները (հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20____թվական

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

N	Հարց	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
2.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող մասնաճյուղերը և գտնվելու վայրը	
3.	Տնտեսավարող սուբյեկտի լիցենզիայի տեսակները	
4.	Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

«Հ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից դեղատներում և դեղատնային կրպակներում սանիտարահիգիենիկ պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

N	Նորմատիվ իրավական ակտի պահանջը	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Զ/Պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Դեղատան մուտքի մոտ առկա է հարմարանք կոշիկները կեղտից մաքրելու համար, որի մաքրումը կատարվում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան օրը մեկ անգամ:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.1				2.0	Դիտողական	
2.	Պատերի և առաստաղների երեսպատումը հնարավոր է դարձնում դրանց խոնավ մաքրումն ախտահանիչ նյութերի օգտագործմամբ:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.2				2.0	Դիտողական	
3.	Սարքավորումները և դեղատնային կահույքը տեղադրված են մաքրելու համար հարմար ձևով՝ չճածկելով բնական լույսի աղբյուրը:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.3				2.0	Դիտողական	
4.	Արևային կողմի լուսամուտները և ցուցափեղկերն ունեն արևից պաշտպանման հարմարանքներ:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.4				2.0	Դիտողական	
5.	Օդափոխության համար օգտագործվող լուսամուտի վերնափեղկերը և օդանցքները ապահովված են 2,2 մմ-ից ոչ մեծ անցքեր ունեցող ցանցով:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.5				2.0	Դիտողական	
6.	Սպասասրահում դեղատան անձնակազմի աշխատատեղերն ապահովված են օդակաթիլային ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդություններից պաշտպանող հարմարանքներով:	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.6				3.0	Դիտողական	
7.	Ասեպտիկ կառուցահատվածի, պատրաստուկների, ասիստենտական սենյակների, զուգարանների մուտքի առաջ	«Հ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.7				2.0	Դիտողական	

	հատակին փռված է ախտահանիչ լուծույթով թրջված ռետինե գորգ:							
8.	Անձնակազմի աշխատողների ձեռքերը լվանալու համար դրված են լվացարանային կոնքեր և ախտահանիչ լուծույթով տարողություն:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.8				2.0	Դիտողական	
9.	Լվացման սենյակում առանձնացված և պիտակավորված են լվացման խեցիներ՝ ներարկման լուծույթների, աչքի կաթիլների, ներքին և արտաքին օգտագործման դեղաձևերի հետ աշխատելու համար, որտեղ լվացվում է նաև դրանց համար օգտագործվող ամանեղենը, և արգելված է ձեռքերի լվացումը:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.9				2.0	Դիտողական	
10.	Արտադրական սենյակում արգելված է սննդի ընդունումը:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.10				2.0	Դիտողական	
11.	Դեղատան սենյակներն ունեն բնական և արհեստական լուսավորություն:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 3.12				2.0	Դիտողական	
12.	Ասեպտիկ կառուցահատվածն ունի ներհուսարտաձիգ օդափոխություն՝ ներհուսարտահոսքի նկատմամբ գերակշռումով:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.2				2.0	Փաստաթղթային Դիտողական	
13.	Ասեպտիկ կառուցահատվածում, պատրաստուկի, ջրի թորման, մանրէազերծման սենյակներում օդի մանրէազերծման համար դրված են չէկրանավորված մանրէազերծիչ ճառագայթիչներ, որոնք միացվում են աշխատանքը սկսելուց առաջ, 1-2 ժամ տևողությամբ, մարդկանց բացակայության պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.3				2.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	

14.	Ճառագայթիչների անջատիչը տեղադրված է սենյակների մուտքի մոտ «Չմտնել, միացված է մանրէազերծիչ ճառագայթիչը» ցուցանակով:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.3				2.0	Դիտողական	
15.	Ուլտրամանուշակագույն ճառագայթիչների աշխատանքի ժամանակ միացվում են օդափոխիչներ՝ թունավոր նյութերի (օզոն, ազոտի օքսիդներ) կուտակումը կանխելու համար:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.3				2.0	Դիտողական Հարցում	
16.	Ասեպտիկ կառուցահատված բերվող բոլոր սարքավորումները, կահույքը նախապես մշակվում են ախտահանիչ լուծույթով թրջված լաթով՝ համաձայն «Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմի»: Նշում 1	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.4				2.0	Դիտողական Հարցում Լաբարատոր	
17.	Ասեպտիկ կառուցահատվածը (պատրաստուկի սենյակ) կից սենյակներից բաժանված է անցախցերով (շյուզ):	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.6				2.0	Դիտողական	
18.	Աշխատակիցները շյուզ մտնելուց առաջ հագնում են հատուկ կոշիկներ, լվանում և ախտահանում են ձեռքերը, հագնում են մանրէազերծված խալաթ, գլխարկ, բախիլներ, դիմակ:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.6				3.0	Դիտողական Հարցում	
19.	Լուծույթների տարողությունների փակման խցանների և այլումինե կափարիչների պատրաստումը և լվացումը կատարվում են համաձայն «Դետինե խցանների մշակման կարգի» և «Այլումինե կափարիչների մշակման կարգի»: Նշում 2	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 4.7				2.0	Դիտողական Լաբարատոր	
20.	Դեղատների արտադրական սենյակները մաքրվում են խոնավ եղանակով՝ լվացող և ախտահանիչ նյութերի օգտագործմամբ համաձայն «Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմի»:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 5.1				2.0	Դիտողական Լաբարատոր	

21.	Տարբեր սենյակների մաքրման համար առանձնացված է մաքրման գույք, որը մակնշված է և օգտագործվում է ըստ նշանակության: Գույքը պահվում է հատուկ առանձնացված տեղերում (սենյակ, պահարան):	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 5.6				2.0	Դիտողական	
22.	Արտադրության թափոնները և աղբը հավաքվում են կափարիչ ունեցող հատուկ տարողություններում և հեռացվում ոչ պակաս, քան հերթափոխը մեկ անգամ:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 5.7				2.0	Դիտողական	
23.	Ձեռքերի լվացարանակոնքերը, սանհանգույցները և աղբի տարողությունները լվացվում, մաքրվում և ախտահանվում են ամեն օր:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 5.7				2.0	Դիտողական	
24.	Դեղատան աշխատողները պահպանում են անձնական հիգիենայի կանոնները.	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 6.1						
24.1	աշխատանքը սկսելուց առաջ հանում են արտահագուստը և կոշիկները,					1.0	Դիտողական	
24.2	հագնում են սանիտարական հագուստ (խալաթ, գլխարկ) ու սանիտարական կոշիկներ, լվանում և ախտահանում են ձեռքերը,					2.0	Դիտողական Հարցում Լաբարատոր	
24.3	զուգարան մտնելուց առաջ հանում են խալաթը, դուրս գալուց հետո ձեռքերը մանրակրկիտ լվանում են և ախտահանում, դեղատնից դուրս չեն գալիս սանիտարական հագուստով և կոշիկներով:					2.0	Դիտողական Հարցում	
25.	Դեղատան յուրաքանչյուր աշխատող ունի ոչ պակաս, քան 2 կոմպլեկտ սանիտարական հագուստ:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 6.3				2.0	Դիտողական	

26.	Դեղերի պատրաստումով, մանրակշռումով զբաղվող աշխատողներին հերթափոխից առաջ հատկացվում են անհատական օգտագործման սրբիչներ:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 6.4				2.0	Դիտողական	
27.	Թորած և ներարկման ջրի ստացումը կատարվում է ասեպտիկ պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.2				2.0	Դիտողական Լաբորատոր	
28.	Ստացված թորած և ներարկման ջուրը հավաքվում է մաքուր, մանրէազերծված տարողություններում, որոնք ունեն «Թորած ջուր», «Ներարկման ջուր» պիտակավորումը:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.5				2.0	Դիտողական Լաբորատոր	
29.	Հավաքման տարաները ջրի թորման սարքին միացված են ապակե խողովակներով:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.7				2.0	Դիտողական	
30.	Օգտագործվում են 16-20 մմ-ից ոչ պակաս տրամագիծ ունեցող խողովակներ: Շատ երկար խողովակաշարի յուրաքանչյուր 5-7մ հեռավորության վրա նախատեսված է եռաբաշխիչ՝ արտաքին ելքով և ծորակով, նմուշառման համար՝ լվացման, մանրէազերծման որակը և թրվածքի մանրէաբանական կազմը որոշելու նպատակով:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.9				2.0	Դիտողական Լաբորատոր	
31.	Խողովակաշարի լվացումը և ախտահանումը կատարվում է դրա հավաքումից առաջ, իսկ շահագործման ընթացքում՝ 14 օրը մեկ անգամ ինչպես նաև մանրէաբանական հետազոտությունների անբավարար արդյունքների դեպքում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.10				2.0	Դիտողական Հարցում Լաբորատոր	
32.	Խողովակաշարի միջով ավտոկլավից անցկացվում է գոլորշի, 30 րոպե տևողությամբ: Մանրէազերծման տևողության հաշվարկը կատարվում է խողովակաշարի հակառակ	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.11				3.0	Դիտողական Փաստաթղթային Հարցում	

	ծայրից (ելքից)՝ գոլորշու դուրս գալու պահից հաշված:							
33.	Պոլիմերային նյութերից պատրաստված խողովակաշարը մանրէագերծվում է ջրածնի պերօքսիդի 6%-ոց լուծույթով 6 ժամ տևողությամբ, այնուհետև լվացվում թորած ջրով:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.11				3.0	Դիտողական Փաստաթղթային Հարցում	
34.	Խողովակաշարի մշակման մասին կատարվում է գրանցում համապատասխան մատյանում: Նշում 3	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 7.11				1.0	Փաստաթղթային	
35.	Թորած ջուրը պահվում է ասեպտիկ պայմաններում 3 օրից ոչ ավելի:	ենթակետ 7.15				3.0	Դիտողական	
36.	Դեղերի պատրաստման համար անհրաժեշտ դեղամիջոցները պահվում են ամուր փակվող պահարաններում, շտանգլասներում՝ դրանց աղտոտումը բացառող պայմաններում: Շտանգլասները յուրաքանչյուր օգտագործումից առաջ լվացվում և մանրէագերծվում են:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.2				2.0	Դիտողական Լաբորատոր	
37.	Օժանդակ նյութերը (բամբակ, մառյա, մագաղաթյա թուղթ, ֆիլտր և այլն) մանրէագերծվում են բիքսերում կամ հղկված խցանով անոթներում համաձայն «Առանձին օբյեկտների մանրէագերծման ռեժիմի», պահվում են փակ վիճակում՝ 3 օրից ոչ ավելի: Նշում 4	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.3				2.0	Փաստաթղթային Լաբորատոր	
38.	Բացված տարողություններում պահվող նյութն օգտագործվում է 24 ժամվա ընթացքում: Նյութը վերցվում է մանրէագերծ նրբունեղիով (պինցետ):	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.3				2.0	Դիտողական Լաբորատոր	
39.	Դեղատնային ամանեղենը լվացվում է համաձայն «Դեղատնային ամանեղենի լվացման կարգի»: Նշում 5	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.4				2.0	Դիտողական	

40.	Հիվանդանոցի վարակիչ բաժանմունքներում օգտագործված դեղատնային ամանեղենն օգտագործելուց առաջ ախտահանվում է համաձայն «Հիվանդանոցների ինֆեկցիոն բաժանմունքներից բերված ամանեղենի ախտահանման կարգի»: Նշում 6	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.4				3.0	Դիտողական Լաբորատոր	
41.	Ամանեղենի մաքրության աստիճանը, դրանց վրա լվացող նյութերի մնացորդների առկայությունը ստուգվում է համաձայն «Ամանեղենի լվացման որակի հսկողության կարգի»: Նշում 7	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.4				2.0	Դիտողական Հարցում	
42.	Լվանալուց հետո ամանեղենը մանրէազերծվում և պահվում է ամուր փակվող պահարաններում 24 ժամից ոչ ավելի:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.4				2.0	Դիտողական Լաբորատոր	
43.	Փակիչները, խցանները, կափարիչները մշակվում և պահվում են դրանց աղտոտումը բացառող պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.6				2.0	Դիտողական	
44.	Դեղերի լուծույթների պատրաստման համար օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների հանվող մասերը (ռետինե և ապակե խողովակներ, ֆիլտրների բռնիչներ, մեմբրանային ֆիլտրներ, ներդիրներ և այլն) մշակվում, մանրէազերծվում և պահվում են հատուկ առանձնացված տեղում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.7				2.0	Դիտողական	
45.	Խիտ լուծույթները, կիսաֆաբրիկատները, ներդեղատնային կիսահումքերը պատրաստվում են ասեպտիկ պայմաններում և պահվում են դրանց ֆիզիկաքիմիական հատկություններին և պիտանիության ժամկետներին համապատասխան, աղտոտումը բացառող պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 8.8				2.0	Դիտողական	

46.	Դեղատներում պատրաստվող և մանրակշռվող դեղերի տարաները փակելու համար օգտագործվող պոլիէթիլենային, ինչպես նաև պլաստմասսայից պտտատակավոր խցանները լվացվում, մանրէազերծվում և պահվում են համաձայն «Պոլիէթիլենային խցանների մշակման կարգի» և «Պլաստմասսային պտտատակավոր խցանների մշակման կարգի»: Նշում 8 Նշում 9	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.5				2.0	Դիտողական Լաբորատոր	
47.	Դեղերի պատրաստման և մշակման համար օգտագործվող փոքր մեխանիզմները լվացվում և ախտահանվում են դրանց կից հրահանգի համաձայն:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.6				2.0	Փաստաթղթային Լաբորատոր	
48.	Յուրաքանչյուր հերթափոխից հետո կշեռքները, մածկաթիակները (շպատելները), մկրատները և դեղատնային մյուս մանր գործիքները սրբվում են ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով կամ սպիրտ-եթերային խառնուրդով (1:1 հարաբերությամբ):	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.7				3.0	Դիտողական	
49.	Բյուրեղային սարքերը և կաթոցիչները դատարկվում են կոնցենտրատներից, լվացվում մանանեխի փոշու և տաք ջրի (50 ⁰ -60 ⁰ C) կամ ջրածնի պերօքսիդի և 0,5%-անոց լվացող նյութի խառնուրդով, պարզաջրվում են թորած ջրով ոչ պակաս, քան 10 օրը 1 անգամ:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.8				2.0	Դիտողական	
50.	Հեղուկ դեղերը քամելու կամ մզելու համար օգտագործվող ձագարները, ինչպես նաև փոշիով և քսուքային զանգվածով հավանգները ծածկվում են մանրէազերծված պլաստմասսայից կամ մետաղյա թիթեղով, մինչև կշեռելը և տարայի մեջ տեղավորելը:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.10				2.0	Դիտողական Լաբորատոր	

51.	Քսուքների պատրաստումից հետո ճարպի մնացորդները հեռացվում են սովարաթղթի, լիզինի միջոցով, հավանգները լվացվում և մանրէազերծվում են համաձայն առանձին օբյեկտների մանրէազերծման ռեժիմի:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.12				2.0	Դիտողական Լաբորատոր	
52.	Աշխատանքի համար օգտագործվող թղթե և մոմած պարկուճները, մաճկաթիակները (շպատելները), թելերը, կապող ռետինները ամեն օր լվացվում են և պահվում ասիստենտական (մանրակշռման) սեղանի արկղներում: Օժանդակ նյութերը պահվում են փակ պահարաններում (տուփերում), դրանց աղտոտումը բացառող պայմաններում:	ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրամանի կետ 9.12				2.0	Դիտողական	
53.	Բժշկական զննության ենթակա անձնակազմը ենթարկվել է նախնական և պարբերական բժշկական զննության: Նշում 10	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման N 1 հավելվածի կետ 1, N 2 հավելվածի ցանկի 4-րդ, 5-րդ կետեր				3.0	փաստաթղթային	

Ծանոթություններ

Նշում 1

ՏԱՐԲԵՐ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՌԵԺԻՄԸ

- Դեղատան սենյակների, կահույքի, առարկաների, սարքավորումների ախտահանման համար օգտագործվում են.
 - քլորամին Բ-ի 1%-անոց լուծույթ,
 - քլորամին Բ-ի 0,75 %-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ),
 - ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ):
Մշակման ձևը՝ կրկնակի մաքրում:
- Ռետինից և պլաստմասսայից պատրաստված առարկաների ախտահանման համար օգտագործվում են.
 - քլորամին Բ-ի 1 %-անոց լուծույթ, 60 րոպե տևողությամբ,
 - քլորամին Բ-ի 0,75 %-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ), 15 րոպե տևողությամբ,
 - ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ, 30 րոպե տևողությամբ,

- ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ), 30 րոպե տևողությամբ:
Մշակման ձևը՝ ընկղմում են լուծույթի մեջ, հետո վաճառում ջրով:
- 3. Մածկաթիակները, մկրատները, նրբունելիները (պինցետները) և այլ փոքր մետաղական, ինչպես նաև ապակյա առարկաները ախտահանվում են եռացնելով թորած ջրում, 30 րոպե տևողությամբ: Նույն ձևով ախտահանվում են ձեռքերի վաճառման խոզանակները, սպունգները, ռետինից և պորոլոնից պատրաստված իրերը, 15 րոպե տևողությամբ:
- 4. Ծակոտկեն ռետինից պատրաստված գորգերը ախտահանվում են.
 - քլորամին Բ-ի 0,75 %-անոց լուծույթով (լվացող նյութի 0,5%-ի հետ),
 - ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով (լվացող նյութի 0,5%-ի հետ):
- 5. Պորոլոնից պատրաստված գորգերը ախտահանվում են.
ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով (լվացող նյութի 0,5%-ի հետ):
Մշակման ձևը՝ երեք լուծույթների օգտագործման դեպքում էլ գորգերը ընկղմում են լուծույթի մեջ, 30 րոպե տևողությամբ:
- 6. Մաքրման պարագաները ախտահանվում են.
 - քլորամինի 1%-անոց լուծույթով,
 - դիքլոր-1-ի 2%-անոց լուծույթով,
 - քլորոդեզինի 1%-անոց լուծույթով, ընկղմելով 60 րոպե տևողությամբ, որից հետո վաճառվում և չորացվում են:
Մաքրելու լաթերը վաճառվում են, ապա ախտահանվում՝ եռացնելով 30 րոպե տևողությամբ:
- 7. Սանիտարատեխնիկական սարքավորումները (կոնքեր) ախտահանվում են.
 - վաճառող, ախտահանող միջոցներով, թույլատրված որևէ վաճառող-ախտահանիչ նյութով թրջված լաթով, 5 րոպե տևողությամբ: Սրբում են առարկայի մակերեսը 0,5 գրամ նյութով կամ պատրաստուկով, 100 սմ² հաշվարկով,
 - թույլատրված մաքրող-ախտահանող պատրաստուկներով,
 - քլորամին Բ-ի 1%-անոց լուծույթով,
 - քլորամին Բ-ի 0,75%-անոց լուծույթով (լվացող նյութի 0,5%-ի հետ): Այս նյութերը օգտագործվում են մակերեսների կրկնակի մաքրման համար:
- 8. Անձնակազմը ձեռքերը օճառով վանալուց հետո սրբում է հետևյալ լուծույթներում թրջված անձեռոցիկներով.
 - էթիլ սպիրտի 30%-անոց լուծույթ,
 - քլորհեքսիդի բիգլյուկոնատի 70%-անոց լուծույթ էթիլ սպիրտում,
 - քլորամին Բ-ի 0,5%-անոց լուծույթ (օգտագործվում է այլ լուծույթների բացակայության դեպքում):
- 9. Անձնակազմի կոշիկների կրկնակի մշակման համար օգտագործվում են հետևյալ լուծույթները.
 - քլորամին Բ-ի 1%-անոց լուծույթ,
 - քլորամին Բ-ի 0,75%-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ):
- 10. Որպես վաճառող միջոց քլորամին Բ-ին և ջրածնի պերօքսիդին ավելացվում է առողջապահության ոլորտում գործնականում թույլատրված վաճառող-ախտահանող միջոցների 0,5%-անոց լուծույթը:

Նշում 2

Կ Ա Ր Գ

ՌԵՏԻՆԵ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

1. Ռետինե նոր խցանները մշակվում են ձեռքով կամ մեքենայով, որևէ թույլատրված լվացող նյութի 0,5%-անոց տաքացրած (50⁰-60⁰C), խցանների կշռի և լվացող նյութի 1:5 հարաբերությամբ լուծույթում, 3 րոպե տևողությամբ: Այնուհետև 5 անգամ ողողվում ջրմուղի տաք ջրով, ամեն անգամ թարմացնելով այն, և 1 անգամ՝ թորած ջրով: 30 րոպե եռացնել նատրիում հիդրոկարբոնատի 1%-անոց լուծույթում, ապա ողողել մեկ անգամ ջրմուղի ջրով և 2 անգամ թորած ջրով: Տեղավորել ապակե անոթներում, վրան լցնել թորած ջուր, փակել և պահել գոլորշային մանրէազերծիչում, 121⁰C ջերմաստիճանում, 1 ժամ տևողությամբ՝ խցանների մակերեսից ծծմբի, թիուրամի, ցինկի և այլ նյութերի հետքերի հեռացման համար: Ջուրը թափել և խցանները 1 անգամ լվանալ թորած ջրով:
2. Մշակումից հետո խցանները մանրէազերծվում են բիքսերում, գոլորշային մանրէազերծիչում՝ 120⁰C, 45 րոպե տևողությամբ: Ռետինե խցանների մեծ քանակների դեպքում մշակումից հետո, առանց մանրէազերծման, դրանք չորացվում են չորացնող պահարանում՝ 50⁰C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, 2 ժամ տևողությամբ և պահվում փակ տարողություններում, մութ, հով տեղ, 1 տարուց ոչ ավելի: Խցանները մանրէազերծվում են օգտագործումից առաջ:
3. Մանրէազերծված խցանները պահում են փակ բիքսերում 3 օրից ոչ ավելի: Բիքսերը բացելուց հետո խցանները կարելի է օգտագործել 24 ժամվա ընթացքում:

Կ Ա Ր Գ

ԱԼՅՈՒՄԻՆԵ ԿԱՓԱՐԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

Սրսկման լուծույթների և աչքի կաթիլների տարողությունները փակելու համար նախատեսված այլումինե կափարիչները պահել լվացող նյութերի 1-2%-անոց, մինչև 70⁰-80⁰C տաքացրած լուծույթներում, 15 րոպե տևողությամբ: Այնուհետև լուծույթը թափել, կափարիչները լվանալ հոսող ջրով, չորացնել օդային մանրէազերծիչներում (բիքսերում) 50⁰-60⁰C ջերմաստիճանում և պահել փակ տարողություններում (բիքսերում, պոլիկներում, տուփերում), դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

Նշում 3

Մ Ա Տ Յ Ա Ն

ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

N	Ժամանակացույց	Մանրէագերծող (ախտահանող) գործոն	Մշակման ժամանակ	Պատասխանատու անձի ստորագրություն	Ծանոթություն
1	2	3	4	5	6

Ց Ա Ն Կ

ՄԱՆՐԷԱԶԵՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

- Գոլորշային մանրէագերծիչների աշխատանքի հսկողության համար անհրաժեշտ է՝
 - բենզոլյական թթու, հալման ջերմաստիճանը՝ 121⁰-122⁰ C,
 - անտիպիրին և ռեզորցին, հալման ջերմաստիճանը՝ 110⁰ C:
- Չոր ջերմային մանրէագերծիչների աշխատանքի հսկողության համար օգտագործվում են՝
 - տիոմիզանյութ, հալման ջերմաստիճանը՝ 1800 C,
 - սադաթթու, հալման ջերմաստիճանը՝ 1800-1840C,
 - ասկորբինաթթու, հալման ջերմաստիճանը՝ 1870-1920C,
 - բարբիտալ, հալման ջերմաստիճանը՝ 190⁰-191⁰C:

Նշում 4

ԱՌԱՆՁԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ

ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ				ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	
	գոլորշու ճնշումը կգ/սմ ²		տևողությունը վրկ.				
	անվանական նշանակությունը	թույլատրելի շեղումը	անվանական նշանակությունը	թույլատրելի շեղումը			
ա) ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈՂ							
Ապակյա ամանեղեն, հավանգներ, ապակե գործվածքային արտադրանք (խալաթներ, մառոյա, բամբակ) չքայքայվող մետաղից պատրաստված իրեր	2,0 (132°C) 1,1+0,1 (120°C)	±0,1 ±0,1	20 45	+2 +3	Գոլորշային մանրէազերծիչ	Մանրէազերծումը կատարվում է փաթեթավորված կամ չփաթեթավորված 2 տակ քաթանում կամ Ա կամ Բ մարկայի մազաղաթե թղթում, բիքսում, ապակյա բանկայում	
Ռետինե արտադրանք	1,1 (120°C)	±1	45	+3	___-II---	___-II---	
բ) ՕԴԱՅԻՆ ՄԵԹՈՂ							
Ապակե ամանեղեն, հավանգ, ապակուց ու չքայքայվող մետաղից և համաձուլվածքներից պատրաստված արտադրանք	180 180 180	±11 ±12 ±14	60 60 60	+5 +5 +5	Օդային մանրէազերծիչ -խցիկի ծավալը մինչև 25 դմ ³ -խցիկի ծավալը 25 դմ ³ -ից մեծ մինչև 500դմ ³ -խցիկի ծավալը 500դմ ³ -ից մեծ	Կատարվում է չոր արտադրանքի մանրէազերծում, փաթեթավորված և չփաթեթավորված	
գ) ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈՂ							
ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՂ ԳՈՐԾՈՆ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ				ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
		գոլորշու ճնշումը կգ/սմ ²		տևողությունը վրկ.			
		անվանական	թույլատրելի շեղումը		թույլատրելի շեղումը		

		նշանա- կությունը		անվանական նշանա- կությունը			
Ապակուց, չքայքայվող մետաղներից և համաձուլվածքներից, պոլիմերային նյութերից պատրաստված արտադրանք	Ջրածին պերօքսիդ* Պետստանդարտ 177-71 6%-անոց լուծույթ	18 50	- ±2	360 180	±5 ±5	Ապակուց, պլաստմասսայից պատրաստված կամ էմալապատված (չվնասված էմալով) փակ տարողություններ	Մանրէազերծումը կատարվում է լրիվ ընկղմելով լուծույթի մեջ, որից հետո արտադրանքը լվացվում է մանրէազերծված ջրով

1. Դեղատնային ամանեղենը հանվում է մանրէազերծիչից, երբ վերջինում ջերմաստիճանը հասնում է 60-70°C և անմիջապես ծածկվում մանրէազերծված խցաններով:
 2. Օժանդակ նյութերը, մանր գույքը և այլն պահպանվում են այն փաթեթներում կամ բիքսերում, որոնց մեջ մանրէազերծվել են, աղտոտումը բացառող պայմանները ապահովելու համար:
- * Ջրածին պերօքսիդի լուծույթը կարելի է օգտագործել 7 օրվա ընթացքում՝ պատրաստման պահից հաշվված, եթե այն պահվել է փակ տարողությունում: Լուծույթը պիտանի է միանվագ օգտագործման համար:

Նշում 5

Կ Ա Ր Գ

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԱՄԱՆԵՂԵՆԻ ԼՎԱՑՄԱՆ

Փաթեթավորումից ազատված նոր կամ օգտագործված ամանեղենը (հիվանդանոցների վարակիչ բաժանմունքներից) ողողվում է ջրմուղի հոսող ջրով՝ արտաքինից և ներսից, աղտոտվածությունը և դեղանյութերի մնացորդները հեռացնելու համար, հետո թրջվում է մինչև 50°-60°C տաքացրած լվացող նյութի մեջ, 20-25 րոպե տևողությամբ: Շատ աղտոտված ամանեղենը թրջվում է ավելի երկար (2-3 ժամ):

Որպես լվացող միջոց թույլ է տրվում օգտագործել մանանեխի փոշու ջրային խառնուրդը՝ 1:20 հարաբերությամբ, «Դեզմոլի» 0,25%-անոց ջրային լուծույթը, սուլֆանոլի 1%-անոց լուծույթի խառնուրդը տրիպոլիֆոսֆատի լուծույթի հետ 1:9-ի հարաբերությամբ և այլ թույլատրված լվացող-ախտահանող միջոցներ:

Նշում 6

Կ Ա Ր Գ

ՌԵՏԻՆԵ ԽՅԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

1. Ռետինե նոր խցանները մշակվում են ձեռքով կամ մեքենայով, որևէ թույլատրված լվացող նյութի 0,5%-անոց տաքացրած (50⁰-60⁰C), խցանների կշռի և լվացող նյութի 1:5 հարաբերությամբ լուծույթում, 3 րոպե տևողությամբ: Այնուհետև 5 անգամ ողողվում ջրնուղի տաք ջրով, ամեն անգամ թարմացնելով այն, և 1 անգամ՝ թորած ջրով: 30 րոպե եռացնել նատրիում հիդրոկարբոնատի 1%-անոց լուծույթում, ապա ողողել մեկ անգամ ջրնուղի ջրով և 2 անգամ թորած ջրով: Տեղավորել ապակե անոթներում, վրան լցնել թորած ջուր, փակել և պահել գոլորշային մանրէազերծիչում, 121⁰C ջերմաստիճանում, 1 ժամ տևողությամբ՝ խցանների մակերեսից ծծմբի, թիուրամի, ցինկի և այլ նյութերի հետքերի հեռացման համար: Ջուրը թափել և խցանները 1 անգամ լվանալ թորած ջրով:
2. Մշակումից հետո խցանները մանրէազերծվում են բիքսերում, գոլորշային մանրէազերծիչում՝ 120⁰C, 45 րոպե տևողությամբ: Ռետինե խցանների մեծ քանակների դեպքում մշակումից հետո, առանց մանրէազերծման, դրանք չորացվում են չորացնող պահարանում՝ 50⁰C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, 2 ժամ տևողությամբ և պահվում փակ տարողություններում, մութ, հով տեղ, 1 տարուց ոչ ավելի: Խցանները մանրէազերծվում են օգտագործումից առաջ:
3. Մանրէազերծված խցանները պահում են փակ բիքսերում 3 օրից ոչ ավելի: Բիքսերը բացելուց հետո խցանները կարելի է օգտագործել 24 ժամվա ընթացքում:

Կ Ա Ր Գ

ԱԼՅՈՒՄԻՆԵ ԿԱՓԱՐԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

Սրսկման լուծույթների և աչքի կաթիլների տարողությունները փակելու համար նախատեսված այլումինե կափարիչները պահել լվացող նյութերի 1-2%-անոց, մինչև 70⁰-80⁰C տաքացրած լուծույթներում, 15 րոպե տևողությամբ: Այնուհետև լուծույթը թափել, կափարիչները լվանալ հոսող ջրով, չորացնել օդային մանրէազերծիչներում (բիքսերում) 50⁰-60⁰C ջերմաստիճանում և պահել փակ տարողություններում (բիքսերում, պուլիկներում, տուփերում), դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

Կ Ա Ր Գ

ԱՄԱՆԵՂԵՆԻ ԼՎԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

1. Լվացված ամանեղենի մաքրության աստիճանի ստուգումը.
2. լվացված և չորացված ամանեղենի ներքին մակերեսը թրջել 3-5 մլ ներկող նյութով: Հետագոտվող մակերեսի վրա այն տարածել՝ թափահարելով 10 վրկ, որից հետո ներկն արագ լվանալ ջրի շիթով: Լվացված ամանեղենը ունի առաջին աստիճանի մաքրություն, եթե դրա ներքին մակերեսի վրա բացակայում են դեղին բծերը և ճարպի հետքերը:
3. Ներկող նյութի պատրաստումը. 70 մլ մինչև 60°C տաքացրած 90%-անոց էթիլ սպիրտում լուծել 0,2 գ սուդան 3, մանրեցրած ներկ և նույնքան էլ մեթիլեն կապույտ: Այնուհետև ավելացնել 10 մլ թորած ջուր և թափահարել: Լուծույթը պիտանի է 6 ամիս:
4. Լվացող նյութերի մնացորդների առկայության որոշումը.
5. ստուգվող լվացված սրվակը ողողել թորած ջրով (սրվակը լցվում է ջրով): Լվացուկով թրջված բամբակե վիրախճուծի վրա կաթեցնել 1-2 կաթիլ ֆենոլֆտալեինի սպիրտային լուծույթ: Լվացող նյութի մնացորդի առկայության դեպքում առաջանում է վարդագույն գունավորում:

Նշում 8

Կ Ա Ր Գ

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

Պոլիէթիլենային նոր խցանները մի քանի անգամ լվանալ 50⁰-60⁰C ջրմուղի ջրում: Եթե պահելու ընթացքում դրանք շատ են աղտոտվել, ապա կիրառել լվացվող միջոցներ, ողողել թորած ջրով և մանրէազերծել՝ ընկղմելով ջրածնի պերօքսիդի 6%-անոց թարմ լուծույթի մեջ, որից հետո լվանալ թորած ջրով, չորացնել չորացնող պահարանում 50⁰-60⁰C ջերմաստիճանում: Չորացրած խցանները պահվում են 3 օր մանրէազերծված, լավ փակվող պոլիկներում, բիքսերում, դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

Նշում 9

Կ Ա Ր Գ

ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ ՊՏՈՒՏԱԿԱՎՈՐ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

Պլաստմասսայից պատրաստված նոր խցանները մի քանի անգամ լվանալ 50⁰-60⁰C ջրմուղի ջրով, չորացնել չորացնող պահարանում 50⁰-60⁰C ջերմաստիճանում: Չորացրած խցանները պահվում են փակ տուփերում կամ այլ տարողություններում, դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

Նշում 10

Ց Ա Ն Կ

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ

N	Կազմակերպություններ և մասնագիտություններ	Թերապևտի ընտանեկան բժշկի գննում	Հետազոտություններ տուփերկուլոզի նկատմամբ	Մաշկավե ներաբանի գննում	Հետազոտություն սիֆիլիսի նկատմամբ	Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)	Հետազոտություններ հելմինթա կրության նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Բ-ի նկատմամբ	Հետազոտություն վիրուսային հեպատիտ Ց-ի նկատմամբ	Հետազոտություն քիթ-ըմպանի ախտածին ստաֆիլակոկի նկատմամբ
4.	Դեղագործական կազմակերպությունների և դեղատների աշխատողներ, որոնք զբաղված են դեղամիջոցների պատրաստմամբ և փաթեթավորմամբ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ		Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ			Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ
5.	Դեղատների, աշխատողներ, որոնք զբաղված են	Աշխատանքի ընդունվելիս և	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝							

դեղամիջոցների իրացմամբ	հետագայում՝ տարին 1 անգամ	տարին 1 անգամ							
---------------------------	---------------------------------	------------------	--	--	--	--	--	--	--

1.	«Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է	v		
2.	«Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		v	
3.	«Զ/պ» - չի պահանջվում, չի վերաբերում			v

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի N 574 հրաման:
2. ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշում:

Տեսչական մարմնի ծառայող _____
(ստորագրություն)

Տնտեսավարող _____»:
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ